

**ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**  
**ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔԱԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ**  
**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՈՐՈՇՈՒՄ N 22/2**

ք.Երևան

20 ապրիլի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ նոտար Նաիրա Մանուչարյանի դիմում-բողոքը՝

**ՊԱՐԶԵՑ**

**1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները**

Նոտար Նաիրա Մանուչարյանը հայտնում է, որ օրենքով սահմանված կարգով որպես նոտար հաշվառվել է հարկային մարմնում 2017թ. և բավարարելով շրջանառության հարկ վճարող համարվելու պահանջներին՝ «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ներկայացրել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն և գործունեություն իրականացրել շրջանառության հարկի դաշտում:

2018թ. ընթացքում ևս բավարարելով շրջանառության հարկ վճարող համարվելու պահանջներին՝ շարունակել է իրեն համարել շրջանառության հարկ վճարող: Սակայն անտեղյակ լինելով, որ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը յուրաքանչյուր տարի պետք է ներկայացնի, մտածելով, որ հաշվառման ժամանակ ներկայացնելով այդ հայտարարությունը շարունակելու է գործունեություն ծավալել հարկման այդ համակարգում, քանի դեռ բավարարում է նախատեսված պահանջներին, և որևէ օրենսդրական փոփոխություններ չեն եղել կամ գործունեությունը չի դադարեցրել, 2018թ. համար չի ներկայացրել շրջանառության հարկ վճարող համարվելու սահմանված հայտարարությունը: Արդյունքում, հարկային մարմնից ստացված ծանուցագրից տեղեկացել է, որ համարվում է ԱԱՀ վճարող:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ 2018թ. ևս բավարարում է շրջանառության հարկ վճարող համարվելու պահանջներին, այս ընթացքում հարկային հաշիվներ դուրս չեն գրվել, Նաիրա Մանուչարյանը խնդրում է թույլ տալ ներկայացնել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն և 2018թ. ընթացքում ևս համարվել շրջանառության հարկ վճարող:

**2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

Նոտար Նաիրա Մանուչարյանը ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական նեգիստրում գրանցվել է 28.12.2016թ.:

Հարկային մարմնի կողմից 2017թ. ընթացքում նոտար Նաիրա Մանուչարյանին սահմանված կարգով ծանուցվել է շրջանառության հարկ վճարող համարվելու

վերաբերյալ հայտարարություն ներկայացվելու մասին: Մասնավորապես, Նաիրա Մանուչարյանը 27.01.2017թ. ստորագրությամբ ստացել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ ծանուցագիրը և 2017թ. ընթացքում համարվել է շրջանառության հարկ վճարող:

Նոտար Նաիրա Մանուչարյանի իրացման շրջանառությունը 2017թ. ընթացքում կազմել է 14.441.500 դրամ:

### **3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ**

ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով հստակ սահմանված է, որ շրջանառության հարկ վճարողներ են համարվում (անկախ բացառապես արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակներ իրականացնելու հանգամանքից) նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանը բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նույնիսկ նույնիսկ (բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի) տվյալ հարկային տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե հարկ վճարողը մինչև տվյալ հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատված ձևով՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

Քննարկվող դեպքում նոտար Նաիրա Մանուչարյանը կողմից մինչև տվյալ հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ հարկային մարմին չի ներկայացվել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն, հետևապես 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող չի կարող համարվել:

Թե ներկայացված դիմում-բողոքում, թե նիստի ընթացքում չի ներկայացվել հիմնավոր ապացույց՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը սահմանված ժամկետում չներկայացնելու պատճառների վերաբերյալ:

### **4. Եզրափակիչ մաս**

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

## **ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Նոտար Նաիրա Մանուչարյանի դիմում-բողոքը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

**Հանձնաժողովի նախագահ**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**